

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ՍԱԼԼԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ.

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է համայնքի ղեկավար՝ Սամվել Ղազարյան

Հաստատվել է համայնքի ավագանու 30.12.2016թ. թիվ 35-Ն որոշմամբ

2016թ., գ.Սալլի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն	4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	4
2.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը.....	6
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը.....	7
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ.....	8
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ	9
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն.....	10
3. Համայնքի զարգացման նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում	11
3.1. Համայնքի զարգացման տեսլական	11
3.2. Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում.....	12
4. ՀԶԾ ֆինանսավորում	15
5. ՀԶԾ մոնիթորինգ.....	16

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

2. Սալլի համայնքի զարգացման ծրագիրը իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական` 2017-2021 թթ իրավիճակի համալիր վերլուծություն, և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացումը: Սույն փաստաթուղթը մշակվել է Սալլիի համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվել է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ:

Սալլի համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ, ինչը ոչ բոլոր դեպքերում է ապահովում բավարար եկամուտներ ապրուստի միջոցները հոգալու համար, նպաստելով համայնքի բնակչության միգրացիայի աճին, հետևաբար համայնքում առաջնային անհրաժեշտություն է աշխատատեղերի ստեղծումը:

Համայնքն ունի գազաֆիկացման կարիք, ոռոգման ջրի պակաս, խմելու ջրի ներքին ցանցը գտնվում է անմխիթար վիճակում, արտաքին ցանցից 500մ-ը անհրաժեշտ է վերակառուցել: Հետևաբար ելնելով վերոնշյալ խնդիրներից համայնքում առաջիկա 5 տարիներին նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը` օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև ՀՀ Կառավարության և այլ միջազգային կառույցների աջակցությունը.

- Նոր աշխատատեղերի ստեղծում
- Գազաֆիկացում
- Փողոցների ամբողջական լուսավորություն
- Հանդամիջյան ճանապարհների բարեկարգում
- Համայնքի մաքրության և բարեկարգման խնդիրների կանոնակարգում
- Ոռոգման և խմելու ջրի ցանցերի բարելավում
- Զբոսաշրջության զարգացում

Համայնքը համագործակցում է մի շարք ծրագրերի հետ, նախատեսվում է հնարավորինս ընդլայնել համագործակցության շրջականները և ներգրավվել նոր ծրագրեր, մասնավորապես այժմ համայնքը համագործակցում է <<Ռազմավարական զարգացման գործակալություն>> ՀԿ-ի հետ:


2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Սալլի գյուղը գոյություն է ունեցել շատ հնուց: Այդ մասին կա հիշատակություն Ստեփան Օրբեյանի «Պատմություն Սիսական» գրքում: Որում հիշատակվում է, որ Գրիգոր Լուսավորիչի հանձնարարությամբ քարոզիչներ են ուղարկվում Հայաստանի տարբեր վայրեր, որոնք իրենց հետ վերցնում են սրբերի մասունքներ և քարոզում են քրիստոնեություն: Հիշատակվում է որ նրանք իջևանում են Սալլի գյուղի տարածքում և այդ սրբերից մեկի Սուրբ Մամասի մասունքները հանգրվանում են մեր գյուղում և այստեղ կառուցվում է փոքր եկեղեցի, որը ներկա պահին վերակառուցման կարիք ունի:

Սալլի գյուղը գտնվում է ներկայիս Վայոց Ձոր մարզի հյուսիս արևմտյան մասում: Հողատարածությունները գտնվում են 1400մ-ից մինչև 2850 մետրի սահմաններում: Գյուղը մարզկենտրոնից հեռու է 20կմ, մայրաքաղաքից 130 կիլոմետր: Կլիման ունի չոր – կոնտինենտալ բնույթ, հաճախակի կրկնվող երաշտներով, որից էլ խիստ տուժում են գյուղատնտեսական մշակաբույսերը: Ներկայումս գյուղի տարածքում բնակվում է 285 բնակիչ: Տղամարդիկ կազմում են ընդհանուր բնակչության 45%- 128 մարդ:

Ստորև ներկայացված են բնակչության տարիքային սանդղակը և բնակչության բնական աճը 2014-2016թ



Բնակչության բնական աճը(2014-2016թթ.)


	Ծնունդ	մահ	աճ
2014	3	1	2
2015	5	1	4
2016	5	1	4

Համայնքի վարչական տարածքը 1917 հա է, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1866 հա:

Համայնքում գործում է մեկ հիմնական դպրոց, առողջության կենտրոն, մշակույթի տուն, գրադարան:

2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

Ստորև ներկայացված է համայնքի ընդհանուր և սեփական եկամուտների դինամիկան 2014-2016թթ.:



2017 թվականի տարեկան բյուջեի նախագծով համայնքի ընդհանուր տարեկան եկամուտները կազմում են 4528,0 հազար դրամ, որից սեփական եկամուտներ՝ 958,0 հազար դրամ:

Համայնքում այժմ գործում են 2 անհատ ձեռնարկատերեր, որից 1 մանրածախ վաճառքի կետ:

Համայնքի բնակչությունը զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ: Ստացված հիմնական արտադրանքը սպառվում է հիմնականում Երևանում և Գեղարքունիքի մարզում:

Համայնքն ունի զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ, մասնավորապես համայնքի տարածքում է գտնվում Սուրբ Մամաս եկեղեցին, մեծ թվով խաչքարեր: Մեղրածոր հանդամասում կա Բեզդարյան այծերի մեծ հոտ: Կարելի է կառուցել դիտակետ , ինչպես նաև համայնքի տարածքով է անցնում Սևան տանող ճանապարհը:

Համայնքում գործում է մեկ հիմնական դպրոց, որտեղ հաճախում են թվով 19 (2016թ.տվյալներով) աշակերտներ:

Համայնքում նպաստառու ընտանիքների ընդհանուր թիվը կազմում է շուրջ 5: Թոշակառուների ընդհանուր թիվը կազմում է 45 , որից հաշմանդամության թոշակ 18, աշխատունակներ 120:

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

Առաջիկա հինգ տարիներին համայնքը պատրաստվում է համագործակցել ՀՀ Կառավարության, միջազգային դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ներդրողների հետ:

2015թ-ից Համայնքը համագործակցում է

«ԱՄԿՈՐ» կազմակերպության հետ, որի օգնությամբ մենք կարողացանք ստեղծել «Մալի» սպառողական կոոպերատիվը, կապ հաստատել ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ առաջիկայում նախատեսվում է շարունակել համագործակցությունը իրականացնելով նոր ծրագրեր և լուծել համայնքի համար շատ կարևոր գյուղատնտեսական և սոցիալական հիմնախնդիրներ:


Համայնքը համագործակցել և առաջիկայում շարունակելու է համագործակցել «Ռազմավարական զարգացման գործակալություն» հասարակական կազմակերպության հետ՝ «< Անասնապահության զարգացում Հարավային կովկասում>> ծրագրի շրջանակներում, նպատակ ունենալով խթանել անասնապահության զարգացումը համայնքում:

Համայնքը պատրաստակամ է համագործակցել անհատ ներդրողների հետ, ովքեր կցանկանան որևէ ներդրում անել համայնքում:


2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ

Համայնքի բյուջեի եկամուտները գոյանում են համայնքի բյուջե վճարվող հողի հարկից, գույքահարկից, տեղական տուրքերից և ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաներից: Համայնքի բյուջեի եկամուտների սեփական եկամուտները փոքր մաս են կազմում, սակայն դրանք 2013-2015թթ. փաստացի տվյալներով աճել են:

Ստորև ներկայացված է համայնքի սեփական եկամուտների փաստացի տվյալները 2013-2015թթ.:



2016 թվականի համայնքի սեփական եկամուտները նախատեսվել են 955,0 հազար դրամ, 2017 թվականի բյուջեի նախագծով նախատեսվել է 958,0 հազար դրամ:



2016 թվականին նախատեսված ընդհանուր եկամուտների չափը կազմում է 5346,5 հազար դրամ, 01.11.2016թ. դրությամբ համայնքի բյուջեի եկամուտները կատարվել են 4241,25 հազար դրամ: 2017 թվականի տարեկան բյուջեի նախագծով նախատեսվել է ընդհանուր եկամուտներ՝ 4528,0 հազար դրամ:

Առաջիկա 5 տարիներին ակնկալվում է պետության կողմից տրամադրվող ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաների չափի ավելացում, ինչպես նաև նախատեսվում է ավելացնել համայնքի բյուջե մտնող սեփական եկամուտների չափաբաժինը, ի հաշիվ տեղական տուրքերի և վճարների: Առաջիկա տարիներին նախատեսված համայնքային ծրագրերի իրականացման գործում նախատեսվում է ներգրավել պետական և դոնոր կազմակերպությունների աջակցությունը:

2.5 Ջարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Սալլի համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ, ինչը ոչ բոլոր դեպքերում է ապահովում բավարար եկամուտներ ապրուստի միջոցները հոգալու համար, նպաստելով համայնքի բնակչության միգրացիայի աճին, հետևաբար համայնքում առաջնային անհրաժեշտություն է աշխատատեղերի ստեղծումը: Սալլի համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է

անասնապահությամբ և հողագործությամբ, ինչը ոչ բոլոր դեպքերում է ապահովում բավարար եկամուտներ ապրուստի միջոցները հոգալու համար, նպաստելով համայնքի բնակչության միգրացիայի աճին, հետևաբար համայնքում առաջնային անհրաժեշտություն է աշխատատեղերի ստեղծումը:

Համայնքն ունի գազաֆիկացման կարիք, ոռոգման ջրի պակաս, խմելու ջրի ներքին ցանցը գտնվում է անմխիթար վիճակում, արտաքին ցանցից 500մ-ը անհրաժեշտ է վերակառուցել: Հետևաբար ելնելով վերոնշյալ խնդիրներից համայնքում առաջիկա 5 տարիներին նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝ օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև ՀՀ Կառավարության և այլ միջազգային կառույցների աջակցությունը.

- Նոր աշխատեղերի ստեղծում
- Գազաֆիկացում
- Փողոցների ամբողջական լուսավորություն
- Հանդամիջյան ճանապարհների բարեկարգում
- Համայնքի մաքրության և բարեկարգման խնդիրների կանոնակարգում
- Ոռոգման և խմելու ջրի ցանցերի բարելավում
- Զբոսաշրջության զարգացում
- Սառնարանային տնտեսությունների ստեղծում

Վերոնշյալ ծրագրերը նախատեսվում է իրականացնել օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև ՀՀ Կառավարության և այլ միջազգային կառույցների աջակցությունը:

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն



3. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1 Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի տեսլականն է ունենալ զարգացած գյուղատնտեսությամբ, փոքր բիզնեսներով համայնք, որտեղ բնակիչներ կունենան զբաղավածություն, երիտասարդները կվերադառնան և կմնան համայնքում: Դրան է ուղղված համայնքի

կողմից կազմված առաջնահերթ ծրագրերի, նպատակների ձևակերպումը ըստ առաջնահերթ բնագավառների, որը ներկայացված է հաջորդ բաժնում:

3.2 Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

Ստորև ներկայացվում է համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում՝ ըստ առանձին բնագավառների.

ԾՐԱԳԻՐ 1

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ԱՏԵՂԾՈՒՄ:

ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՆԱԽԱԳԻԾ

Ինչու՞ անհրաժեշտություն առաջացավ կազմելու այս նախագիծը:

Քանի որ, այս նախագծի իրականացումը հնարավորություն կտա լուծելու համայնքի համար շատ կարևոր գյուղատնտեսական և սոցիալական հիմնախնդիրներ:

Համայնքին սպասարկող միակ ոռոգման առվի երկարությունը 13 կմ է և ակունքն բարձր է ծովի մակերևույթից 2300 մ: Ձմռանը որոշ հատվածներում ջուրը սառչում է և առաջացնում վթար, Համայնքը գրկվում է ոռոգման ջրից: Ձմռան ընթացքում համայնքի ընտանի կենդանիները գրկվում են խմելու ջրից: Քանի որ այդ հատվածը գտնվում է 2300 մ բարձրության վրա, մայիսի վերջին նոր հնարավոր է լինում տեխնիկայով մոտենալ այդ հատվածին և վերանորոգել վթարված խողովակները և մայր առուն: Գարնանը հնարավոր չի լինում ջրել ցորենի և գարու ցանքատարածքները, բնական խոտհարքերը, արոտները: Համայնքի բնակչությունը չի կարողանում լիարժեք գյուղատնտեսական գործունեություն ծավալել: Արդյունքում տնտեսական և սոցիալական վիճակի անկում, հողերի դեգրադացիա և բնակիչների միգրացիա: Այդ ջրագծի 510 մ հատվածը կառուցված է 320մ խողովակներով, բայց անհրաժեշտ է կառուցել ևս 988մ ,որպեսզի համայնքը շուրջ տարի ունենա ոռոգման ջուր: Կունենանք համայնքի բնակիչների եկամուտների աճ, կավելանան մշակովի տարածքներ, կտնկվեն նոր այգիներ, կնվազի էռոզիան, կմեղմվի միգրացիան: Ոռոգման ջրի խողովակաշարի կառուցումը հնարավորություն կտա ոռոգելի դարձնել ևս 37 հա չմշակվող վարելահողեր և 31 հա սեփականաշնորհված : Արդյունքում նոր աշխատատեղերի ստեղծում:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ խողովակի 218մ –ը կտրամադրի համայնքը , խողովակի մնացած մասը և գումարը ակնկալվում է ստանալ կառավարության և միջազգային կազմակերպությունների կողմից:

ԾՐԱԳԻՐ 2

ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՋԱՖԻԿԱՑՈՒՄ:

Համայնքի համար կարևորագույն խնդիր է գազաֆիկացումը: Բնական գազի բացակայությունը համայնքի տարածքում լուրջ խոչընդոտ է հանդիսանում թէ՛ ներդրողների և թէ՛ ազգաբնակչության տնտեսական զարգացման համար: Բնակիչները օգտագործում են անհամեմատ թանկ հեղուկ գազ և էլեկտրական հոսանք, ինչպես նաև հատում կանաչ տարածքներ: Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է հարցը բարձրացնել համապատասխան գերատեսչությունների և ՀՀ կառավարության առջև:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019-2020 թվականներին՝ պետական աջակցությամբ, որի համար անհրաժեշտ է շուրջ 20 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 3

ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ:

Համայնքի համար կարևոր է փողոցային լուսավորությունը: 2017- 2019 թվականներին նախատեսվում է իրականացնել համայնքի փողոցների 0,8կմ ճանապարհի լուսավորությունը: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 2 մլն ՀՀ դրամ, որը նախատեսվում է իրականացնել համաներդրմամբ: Համայնքի սեփական ներդրումը կկազմի 300000 դրամ, մնացած 1,7 մլնն ակնկալվում է ստանալ այլ կազմակերպություններից ու ներդրողներից:

ԾՐԱԳԻՐ 4

ՀԱՆՂԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ:

Հանդամիջյան ճանապարհների անբարեկարգ վիճակը խոչընդոտ է գյուղացիների գյուղատնտեսական աշխատանքների կատարմանը, լրացուցիչ խնդիրներ է առաջացնում տեխնիկայի և բնակիչների համար: Կարևոր է ծրագրի ամբողջական իրականացումը:

21կմ հանդամիջյան ճանապարհներից 5կմ-ը վերանորոգվել է, մնացած 16 կմ-ը նախատեսվում է վերանորոգել 2017-2019թ.թ-ին, որի համար անհրաժեշտ է նախնական

գնահատմամբ 2 մլն դրամ: Ծրագիրը նախատեսվում է իրանացնել<< ռազմավարական զարգացման գործակալության>>ՀԿ-իև համայնքի ուժերով:

:

ԾՐԱԳԻՐ 6

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ:

Սալլի համայնքում այժմ իրականացվում են աղբահանման աշխատանքներ, մասնավորապես ամիսը մեկ անգամ կազմակերպվում է կենցաղային աղբի տեղափոխում, սակայն այն բավարար չէ:Նախատեսվում է տեղադրել երեք աղբաման և շաբաթը մեկ անգամ կատարել աղբահանություն:

ԾՐԱԳԻՐ 7

ԽՄԵԼՈՒ ԶՐԱԳԾԻ ՆԵՐՔԻՆ

ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Ծրագրի նկարագրությունը և հիմնավորումը

Խմելու ջրի ներքին ցանցը ամբողջությամբ շարքից դուրս է եկել: Անձրևաջրերը և կեղտաջրերը հաճախակի ներս են թափանցում ջրագիծ և վտանգավոր դարձնում խմելու ջրի օգտագործումը:Այս ծրագրով առաջարկվում է հիմնական վերակառուցման ենթարկել համայնքի ջրամատակարարման ներքին ցանցը:

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

-Ապահովել համայնքը խմելու ջրով:

-Նվազեցնել ջրի կորուստը:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է 12մլ դրամ:Ակնկալվում է ծրագիրը իրականացնել համայնքի և դոնոր կազմակերպությունների և կառավարության ուժերով :

ԾՐԱԳԻՐ 8

Խմելու ջրի արտաքին ցանցի 0.6 կմ հատվածի վերակառուցում

Համայնքի ջրամատակարարման համակարգը կառուցվել է 1960 թվականին: Ջրագծի երկարությունը 12 կմ է : Վերջին տարիներին վերակառուցվել է ջրագծի մեծ մասը:

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Ջրագիծը կառուցվել 60-ական

թվականներին Դ=50մմ- անոց խողովակչարով,այն անցնում է ճահիճների միջով, տարիների ընթացքում ենթարկվել է կոռոզիայի և շարքից դուրս եկել: Վերջին տարիներին ջրագծի հատվածներից մեծ մասը վերակառուցվել է Դ=100մմ-անոց խողովակներով սակայն 0.6կմ-անոց հատված մնացել է: Համայնքի հրատապ խնդիրներից է խմելու ջրի ջրագծի հիմնական վերակառուցումը: Այս ծրագրով առաջարկվում է հիմնական վերակառուցման ենթարկել համայնքի ջրամատակարարման արտաքին ցանցը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

-Ապահովել համայնքը շուրջորյա խմելու ջրով ,նվազեցնել խողովակների մաշվածությունից առաջացած ջրի կորուստը:Աշխատանքները նախատեսվում է կատարել կառավարության ֆինանսական աջակցությամբ 2017թ-ին:Ընդհանուր արժեքը 8միլիոն դրամ:

ԾՐԱԳԻՐ 9

Սալլի ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ:

Վայոց ձորը յուրօրինակ զբոսաշրջային գոտի է, հարուստ պատմամշակութային արժեքներով և պատմությամբ: Մարզի ռեսուրսները նպաստում են զբոսաշրջության տարբեր ձևերի զարգացմանը, մասնավորապես էկոտուրիզմ, լեռնային տուրիզմ, ագրոտուրիզմ, առողջարանային տուրիզմ, էքստրեմալ տուրիզմ: Այս առումով բացառություն չէ նաև Սալլի համայնքը, որի ռեսուրսները նպաստում են զբոսաշրջության վերը նշված ձևերի զարգացմանը, մասնավորապես համայնքի տարածքում է գտնվում Սուրբ Մամաս եկեղեցին, բազմաթիվ խաչքարեր, Մեղրածորը , Բեզդարյան այծերի մեծ հոտ, ինչպես նաև համայնքի տարածքով է անցնում Սևան տանող մայրուղին:

Համայնքում չկան հյուրատներ:Նախատեսվում է կառուցել հյուրատներ դոնոր կազմակերպությունների աջակցությամբ

Այսպիսով նախատեսվում է համայնքում առաջիկա 5 տարիներին՝ 2017-2021թթ. կառուցել հյուրատներ Ինչպես նաև զարգացնել ագրոտուրիզմը՝ զբոսաշրջային սեզոնին

կազմակերպել այցեր ոչ միայն պատմամշակութային վայրեր, այլև մասնակցություն բերքահավաքի, գյուղատնտեսական արտադրանքների պատրաստման գործընթացներին: Կազմել տուրեր էքստրենալ տուրիզմ նախընտրողների համար:

Ծրագիրը կյանքի կոչելու դեպքում համայնքը կդրամադրի համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածք, անհրաժեշտ գումարը ակնկալվում է ստանալ միջազգային դոնոր կազմակերպություններից՝ 4 մլն դրամ:


4. ՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի զարգացման ծրագրում նախատեսված ծրագրերը և այլ աշխատանքներ ուղղված համայնքի զարգացմանը կիրականացվեն օգտագործելով համայնքի սեփական եկամուտները, ՀՀ Կառավարության պետական աջակցությունը, միջազգային և դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ներդրողների աջակցությամբ: Նշված ներդրումները և աջակցությունը ստանալու համար այժմ տարվում են աշխատանքներ:

Մասնավորապես ՀԶԾ-ում նշված մի քանի ծրագրերը նախատեսվում է իրականացնել ՀՀ Կառավարության և անհատ ներդրողների աջակցությամբ: Ծրագրերի մի մասը կիրականացվեն համայնքի սեփական եկամուտների հաշվին:

Ստորև ներկայացվում է 2017-2021 թվականների ընթացքում վերոնշյալ ծրագրերի ր աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորման աղբյուրները և դրանց չափերը:

ՀԶԾ ֆինանսավորման ուղղությունները



- ՀՀ Պետական աջակցություն
- Համայնքի սեփական ներդրում
- Միջազգային և դոնոր կազմակերպություններ

Վերոնշյալ ծրագրերի բյուջեները հաշվարկված են նախնական գնահատմամբ, նախատեսվում է այդ ծրագրերը իրականացնել համաներդրմամբ՝ ներիժգրավելով համայնքի սեփական եկամուտները, ՀՀ Պետական աջակցությունը, ինչպես նաև միջազգային և դոնոր կազմակերպությունների, անհատ ներդրողների աջակցությունը:

5. ՀԶԾ ՍՈՆԻԹՈՐԻՆԳ

Համայնքի ՀԶԾ ծրագրով ներառված զարգացման ծրագրերը և աշխատանքները կարևոր են համայնքի զարգացման գործում, որոնք միտված են գլխավորապես համայնքի բնակչության կենսամակարդակի և ապրուստի պայմանների բարելավմանը, այդ իսկ պատճառով ՀԶԾ-ի մոնիթորինգը շատ կարևոր:

Նախատեսվում է մոնիթորինգ իրականացնել 5 տարիների ընթացքում վերը նշված բոլոր ծրագրերի իրականացման ժամանակ, ինչպես նաև իրականացնել մոնիթորինգ յուրաքանչյուր ծրագրի ավարտից հետո հասկանալու ստացված օգուտները և հետագայում նմանատիպ ծրագրերի իրականացման ընթացքում կատարվելիք բարեփոխումները:

Մասնավորապես մոնիթորինգի կենթարկվեն հետևյալ ցուցանիշները.

- յուրաքանչյուր ծրագրի բյուջեն, դրա ֆինանսավորման աղբյուրները,
- ծրագրի օգուտները և արդյունքները,
- ներգրավված բնակիչների թիվը,

Կատարված մոնիթորինգի արդյունքները կամփոփվեն և կներկայացվեն համայնքի բնակչության ուշադրությանը տարին մեկ անգամ՝ հրավիրելով համայնքի ընդհանուր ժողով: Այն կօգնի ապահովել ՏԻՄ աշխատանքների թափանցիկություն, ինչպես նաև յուրօրինակ հարթակ կհանդիսանա լսելու համայնքի բնակիչների առաջարկությունները և կարծիքները: